



ՀԱՅ ԱՏՈՄԱՏՈՒԼՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0001, ՀՀ Երևան, Աբովյան 34 ա 57/1, +374 99 521442, +374 10 521442, ardunion@gmail.com

2018թ. դեկտեմբերի 2-ին “Էլիտ Պլազա” բիզնես-կենտրոնում կայացավ ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորության թեկնածու, ներկայում Առողջապահության նախարարի պաշտոնակատար Արսեն Թորոսյանի հանդիպումը ՀՀ առողջապահության ոլորտի ներկայացուցիչների հետ, որտեղ ներկայացվեց թեկնածուի նախընտրական ծրագիրը:

Պետք է նշենք, որ հանդիպումը Էականորեն տարբերվում էր նախկինում կազմակերպվող նմանատիպ հանդիպումների ձևաչափից՝ ոչ մի ձևական և ականջահաճո ձևակերպում, ոչ մի պոպուլիզմ: Փոխարենը առիթ ունեցանք ներկա գտնվելու երկարամյա գործնական աշխատանքային պլանի ներկայացմանը, որտեղ հստակ նշվեց դերերի վերաբաժանման կարևորությունը:

<<Հայ Ստոմատոլոգների Միություն>> հասարակական կազմակերպության կողմից ներկա էր հիմնադիր նախագահ՝ ներկայում փոխնախագահ Թորգոմ Դաշտոյանը, ով հնչեցրեց դահլիճում հնչած բազմաթիվ արդի հարցերից ևս մեկ կարևոր հարց:

Հարց.- Անձամբ նախարարը և առողջապահության նախարարությունը պատրաստվում են կարգավորել բազմաթիվ լիցենզավորված կրթական հիմնարկների կողմից առողջապահական համակարգ մտնող մեծաքանակ բժիշկների հարցը: Նշվեց, որ մասնավորապես ստոմատոլոգիական ոլորտ տարեկան մտնում է մոտ 400 բժիշկ: Ինչպես՝ է առողջապահության նախարարությունը պատրաստվում կանոնակարգել այդ հարցը կրթության նախարարության հետ համատեղ, որը նույնպես հանդիսանում է տվյալ հարցի պատասխանատուն:

Պետք է գոհունակությամբ հայտնենք, որ պարոն Ա. Թորոսյանի կողմից հնչեց մանրակրկիտ պատասխան, որում նա արտահայտեց իր խոր մտահոգությունը հնչեցված խնդրի վերաբերյալ:

ՀՍՄ-ը կիսում է հարցի լուծման ռազմավարական տեսակետը և համակարծիք է նախարարի արտահայտած կարծիքի հետ և ունի իր առաջարկները թե՛ այս և թե՛ մյուս կարևորագույն ոլորտներին վերաբերող հարցերի վերաբերյալ:

ՀՍՄ-ը հայտնում է իր աջակցությունը պարոն Արսեն Թորոսյանին և գտնում է, որ արդեն ձևավորված արհեստավարժ թիմը ի գործ է կատարել իրեն վրա դրված պարտավորությունները:

ՀՍՄ-ը պատրաստակամ է գործնականում ակտիվորեն ներգրավվել իրականացվող ծրագրերի ընթացքին:

Երևան. 03.12.2018